ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
էլ. հասցե՝proshyan.kotayq@mta.gov.am, Proshyan2413@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2015 թվականի N 49

ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 12_ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել համայնքի ավագանու թիվ 12-րդ հերթական նիստի օրակարգը՝ բաղկացած հետևյալ հարցերից.

1) Պռոշյան գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 20-ի թիվ 3-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
2) Պռոշյան համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին
3) Պռոշյանի գյուղապետարանի աշխատակազմի, ՀՈԱԿ-ների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
4) Պռոշյան գյուղական համայնքի կողմից 2016 թվականի մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
5) Պռոշյան գյուղական համայնքի վարչական տարածքում 2016 թ. տեղական տուրքեր և վճարների տեսակներն ու դրույքաչափերը հաստատելու մասին

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Պետրոսյան Մարիամ
2. Մովսիսյան Արմեն
3. Ենոքյան Արթուր
4. Սահակյան Արտաշես
5. Անդրանիկ Հարությունյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
էլ. հասցե՝proshyan.kotayq@mta.gov.am, Proshyan2413@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2015 թվականի N 50-Ն

ՊՌՈՇՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի ԹԻՎ 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնքի 2015թ.-ի բյուջեի մասին» թիվ 3-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ /համաձայն հավելվածի/:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Պետրոսյան Մարիամ
2. Մովսիսյան Արմեն
3. Ենոքյան Արթուր
4. Սահակյան Արտաշես
5. Հարությունյան Անդրանիկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված
Պողշյան գյուղական համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 17-ի
Թիվ [illegible] որոշման

Պողշյան համայնքի 2015 թվականի բյուջեի եկամուտների մեջ կատարել ներքոհիշյալ փոփոխությունները.

1.Գույքահարկ համայնքների վարչական տարացքներում գտնվող շենքերի և շինությունների համար սահմանված 9000.0 փոփոխել և սահմանել 8000.0

2.Հողի հարկ համայքների վարչական տարացքներում գտնվող հողի համար սահմանված 11000.5 փոփոխել և սահմանել 9000.5

3.Գույքահարկ փոխադրամիջոցների համար սահմանված 12400.0 փոփոխել և սահմանել 11400.0

Պողշյան համայնքի բյուջեի ծախսերի մեջ կատարել ներքոհիշյալ փոփոխությունները.

Բ/Խ/Դ	Ս/Հ	Հոդվածների անվանումները	Ընդամենը	Ավելացում պակասեցում	Ընդամենը
4/5/1	4251	Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում	1764.3	-500.0	1264.3
8/1/1	4251	Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում	4000.0	-3500.0	500.0
8/2/3	4637	Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	7687.0	+1000.0	8687.0
9/1/1	4637	Նախադպրոցական կրթություն/ընթացիք դրամաշնորհներ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին/	31000.0	+4000.0	35000.0
11/1/2	4891	Պահուստային միջոցներ	6121.7	-5930.0	191.7
10/7/1	4726	Հուղարկավորության նպաստներ բյուջեից	2000.0	-250.0	1750.0
10/7/1	4729	Այլ նպաստներ բյուջեից	6000.0	+250.0	6250.0
1/1/1	4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	44000.0	+1500.0	45500.0
1/1/1	4239	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	100.0	+30.0	130.0
1/1/1	4235	Կառավարչական ծառայություններ	600,0	-600,0	0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
էլ. հասցե՝proshyan.kotayq@mta.gov.am, Proshyan2413@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2015 թվականի N 51-Ն

ՊՌՈՇՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3) կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթների,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Պռոշյան գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն / համաձայն հավելվածների/ .

2. Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի սահմանել՝

1) համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման ընթացքում կարող է կատարել վերաբաշխումներ.

2) համայնքի ղեկավարի կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15%-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Պետրոսյան Մարիամ
2. Մովսիսյան Արմեն
3. Սահակյան Արտաշես
4. Հարությունյան Անդրանիկ
5. Ենոքյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
էլ. հասցե՝proshyan.kotayq@mta.gov.am, Proshyan2413@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2015 թվականի N 59

ՊՌՈՇՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ,ՀԱՄԱՅՔՆԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղականինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ և 26-րդ կետերով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Պռոշյան համայնքի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Պռոշյան գյուղական համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածներ 2,3 -ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Պետրոսյան Մարիամ
2. Մովսիսյան Արմեն
3. Սահակյան Արտաշես
4. Հարությունյան Անդրանիկ
5. Ենոքյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Պոռոշյանի <<Կարոտ Մկրտչյան>>-ի անվան մանկապարտեզ ՀՈԱԿ

Հավելված
Պոռոշյան համայնքի ավագանու
2015թ.-ի դեկտեմբերի 17-ի թիվ52 որոշման

Աշխատակիցների թվաքանակը՝ 8

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	6	7	8	10
1	<<Կարոտ Մկրտչյան>>-ի անվան ՀՈԱԿ	տնօրեն	քաղաքացիաիրավական	1	99 000		99 000
2		գեղմասվար	քաղաքացիաիրավական	1	80 300		80 300
3		գրադարանավար	քաղաքացիաիրավական	2	80 300		160 600
4		հաշվապահ	քաղաքացիաիրավական	1	78 100		78 100
5		հավաքարար	Տեխնիկական սպասարկման	1	78 100		78 100
6		խմբակի կազմակերպիչ	քաղաքացիաիրավական	1	80 300		80 300
7		պանթեոնի օժանդակ բանվոր	Տեխնիկական սպասարկման	1	81 400		81 400
Ընդամենը							657 800

Համայնքի ղեկավար Ա. Մուրադյան

Հավելված
Դոռոշյան համայնքի ավագանու
2015թ.-ի դեկտեմբերի 17-ի թիվ 52 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Դոռոշյանի <<Աստղիկ>> մանկապարտեզ ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ 19

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	6	7	8	10
1	<<ԱՍՏՂԻԿ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ	տնօրեն	քաղաքացիաիրավական	1	130 000		130 000
2		դաստիարակ	քաղաքացիաիրավական	4	82 500		412 500
3		դաստիարակի օգնական	քաղաքացիաիրավական	4	80 300		353 320
4		մեթոդիստ	քաղաքացիաիրավական	0.5	110 000		55 000
5		բուժքույր	քաղաքացիաիրավական	1	79 200		79 200
6		Գլխավոր հաշվապահ	քաղաքացիաիրավական	1	79 750		79 750
7		Տնտեսվար	քաղաքացիաիրավական	1	78 100		78 100
8		Գործավար	քաղաքացիաիրավական	1	78 100		78 100
9		խոհարար	քաղաքացիաիրավական	1	79 750		79 750
10		խոհարարի օգնական	քաղաքացիաիրավական	1	79 200		79 200
11		օժանդակ բանվոր	քաղաքացիաիրավական	0.5	78 100		39 050

12	դերձակ	Տեխնիկական սպասարկման	0.5	78 100		39 050
13	պահակ	Տեխնիկական սպասարկման	1	78 100		78 100
14	դռնապան	Տեխնիկական սպասարկման	1	78 100		78 100
15	հնոցապան	Տեխնիկական սպասարկման	1	78 100		78 100
16	լվացարար	Տեխնիկական սպասարկման	1	78 100		78 100
17	հաշվետար գանձ.	Տեխնիկական սպասարկման	1	78 100		78 100
18	երաժիշտ	Տեխնիկական սպասարկման	1	78 100		78 100
19	ֆիզ. Հրահանգիչ	քաղաքացիաիրավական	1	78 100		78 100
20	Սոցիալական մանկավարժ	քաղաքացիաիրավական	1	76 140		76 140
Ընդամենը						2 125 860

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված N
Պոռոշյանի գյուղական համայնքի ավագանու
2015թվականի դեկտեմբերի 17-ի N 52 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1. Աշխատակիցների քանակը 18
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 18

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքը	Դրույքաչափը (դրամ)	Ընդամենը աշխատավարձ
1	2	3	4	5	6
		Քաղաքական պաշտոն			
1	Համայնքի ղեկավար	1	1	310000	310000
		Հայեցողական պաշտոններ			
1	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	238700	238700
2	Համայնքի ղեկավարի օգնական	1	1	220000	168000
3					
		Համայնքային ծառայողներ			
1	Գյուղապետարանի քարտուղար	1	1	238700	238700
2	Գլխավոր մասնագետ	2	1	225000	450000
3	Առաջատար մասնագետ	4	1	187000	748000
4	Առաջին կարգի մասնագետ	3	1	167000	501000
5					
		Քաղաքացիական աշխատանք կատարողներ			
1					
2					
3					
		Տեխնիկական սպասարկման անձնակազմ			
1	Կոմունալ ծառայության	1	1	130000	130000
2	Աղբահանության վճարների	1	1	96000	96000
3	Հավաքարար	1	1	78000	78000
4	Օժանդակ բանվոր	1	1	96000	96000
5	Կոմունալ աշխատակից	1	1	78000	78000
	Ընդամենը	18	12		3132400

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Մուրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
էլ. հասցե՝proshyan.kotayq@mta.gov.am, Proshyan2413@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2015 թվականի N 53-Ն

ՊՌՈՇՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Պռոշյան գյուղական համայնքի կողմից 2016 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարները /համաձայն հավելվածի/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Պետրոսյան Մարիամ
2. Սահակյան Արտաշես
3. Մովսիսյան Արմեն
4. Հարությունյան Անդրանիկ
5. Ենոքյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հաստատվել է
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Պառաջի գյուղական համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 17 - ի
թիվ 53-Ն որոշման

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՌԱՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Մանկապարտեզի ծնողական վարձավճար սահմանել ամսական՝ վեց հազար հինգ հարյուր ՀՀ դրամ:

2. Մանկապարտեզի ծնողական վարձավճարից ազատել՝

ա) երկկողմանի ծնողազուրկ երեխաներին

բ) արցախյան ազատամարտում զոհվածների և վիրավորների երեխաներին,

գ) ծնողական վարձավճարից կիսով չափ (50 %) ազատել՝
միակողմանի ծնողազուրկ երեխաներին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
Էլ. հասցե՝proshyan.kotayq@mta.gov.am, Proshyan2413@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբեր 2015 թվականի N 54-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ գլխով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան գյուղական համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Պետրոսյան Մարիամ
2. Սահակյան Արտաշես
3. Մովսիսյան Արմեն
4. Հարությունյան Անդրանիկ
5. Ենոքյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված N
Պառոշյան համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի17-ի N 54-Ն որոշման

Պառոշյան համայնքի 2016 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինարարությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

ա. հիմնական օբյեկտների համար՝

_ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10 000 դրամ.

բ. սույն կետի ա) ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

_ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20 000 դրամ.

_ 501 –ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 40 000 դրամ.

_ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50000 դրամ.

- 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 100 000 դրամ.

գ. ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

_ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ.

_ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝2500 դրամ.

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման , արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափեր ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա)հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ. բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1) ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում է նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքեր գործառնական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3)Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 4000 դրամ:

4) Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

ա.ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համր՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ

բ.ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ ՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ:

գ. Հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ:

5) Համայնքի տարածքում՝

ա.բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ.հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված

նավթային գազերի և տեխնիկական հեղուկներիվաճառքիթույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 150 000 դրամ

5.1)Համայնքի տարածքում՝ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50 000 դրամ

6) Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) ժամը 24-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել

ա. առևտրի օբյեկտների համար՝ 30 000 դրամ

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 75000 դրամ

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ

դ. խաղատների կազմակերպման համար 750 000 դրամ

ե. շահումով խաղերի կազմակերպման համար 400 000 դրամ

զ. վիճակախաղերի կազմակերպման համար՝ 125 000 դրամ

7) Համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 0.0 դրամ

8) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել.

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

բ.թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ

գ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ

դ. դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 5 000 դրամ:

10) Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվություն տալու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 8000դրամ

Հավելված N
Պռոշյան համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 17-ի N 57-Ն որոշման

Պռոշյան համայնքի 2016 թվականի տեղական վճարների դրույքաչափերը

1) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5 000 դրամ

2) Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար, տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 20 000 դրամ

3) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 2500 դրամ:

4) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 1000 դրամ:

5) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար սահմանել՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 100 / հարյուր / ՀՀ դրամ վարձավճար աղբահանության վճար.

6) Համայնքի տարածքում հասցեի որոշում տրամադրելու համար՝ 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ: